ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ . ՀԱՍՏԱՏԵԼԸ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐ Է ԴԱՐՁԵԼ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ

Ամերիկյան մամուլի գնահատմամբ արեւմտյան նավթային ընկերությունները զգույշ լավատեսությամբ են արտահայտվում ապագայի մասին: Ըստ մասնագետների, անհրաժեշտ է լուծել 2 հիմնահարց՝ Ռուսաստանի ոչ բարենպաստ դիրքորոշումը կնքված պայմանագրի նկատմամբ եւ արդյունահանված նավթը Եվրոպա փոխադրելու խողովակաշարի խնդիրը: Այս 2 հիմնահարցերը նաեւ կապված են միմյանց հետ, այսինքն՝ հավանական է Ռուսաստանի դիրքորոշումը մեղմանա, եթե արեւմտյան երկրները եւ Ադրբեջանը համաձայնեն, որ խողովակաշարը անցնի Ռուսաստանով եւ կամ այլ զիջումներ կատարեն: Համաձայն «Ազատություն» ռադիոկայանի, ամերիկյան ընկերությունների ներկայացուցիչները շատ զգուշորեն են արտահայտվում Ռուսաստանի դերի մասին, հույս հայտնելով, որ բոլոր կողմերը կընդունեն ստորագրված պայմանագիրը, որը դեռ կվավերացվի Ադրբեջանի խորհրդարանի եւ մասնակից ընկերությունների կառավարիչ մարմինների կողմից: Ամերիկյան «Յունիկլ» ընկերության ներկայացուցիչը «Ազատություն» ռադիոկայանին հայտնեց, որ Ռուսաստան եւ Ադրբեջան բանավեճում ամերիկյան ընկերությունները չեզոք են, նրանց առաջնահերթ խնդիրը տարածաշրջանի կայունությունն է: Նա շեշտեց, որ խողովակաշարի վերաբերյալ մանրամասները չեն հստակեցված, եւ անհրաժեշտ է շարունակել քննարկումները: «Թենզլ» ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ խողովակաշարի հարցում գոյություն ունեն բազմաթիվ ընտրանքներ, որոնց շուրջ բանակցությունները կշարունակվեն: Հակառակ այս պնդումների, ըստ Ռոյթեր գործակալության, սեպտեմբերի 21-ին Թուրքիայի ԱԳ նախարարության խոսնակ Սեֆհաթ Աթամանը հայտնել է, որ խողովակաշարի հարցը արդեն որոշված է, այսինքն՝ այդ խողովակաշարը պետք է անցնի Իրանով եւ Թուրքիայով: Սակայն ԱՄՆ-ի պետական պաշտոնյաները ասացին, թե իրենք տեղյակ չեն այդպիսի որոշման մասին: Ընդհակառակը, պարզորոշ է, որ ԱՄՆ մերժում է Իրանով խողովակաշար անցկացնելու ընտրանքը եւ ամերիկյան ընկերությունները եւս լուրջ վերապահություններ ունեն այդ հարցում: Զարմանալի չէ, որ Թուրքիայում նաեւ խոսվում է խողովակաշարի Հայաստանով անցնելու ընտրանքի մասին: Վերջերս «Միլիեթ» թերթի հրապարակագիրը, ակնարկելով այդ խնդրին, կարծիք է հայտնել, որ Արեւմուտքը վստահաբար ճնշում է բանեցնելու Հայաստանի վրա: Նա գրել է, որ Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատումը այժմ կարեւոր խնդիր է դարձել Արեւմուտքի համար: Խողովակաշարի ընտրանքից անկախ, ամերիկյան ընկերությունները նաեւ խոսում են ադրբեջանական նավթը Ռուսաստանի հետ փոխանակելու մասին: Այսինքն՝ արդյունահանված նավթը Ադրբեջանից կուղարկվի Ռուսաստան, իսկ Ռուսաստանը իր սեփական նավթը կուղարկի Եվրոպա: Այդպիսով, կլուծվի խողովակաշարի փշոտ հարցը: Անկախ խողովակաշարի մասին Թուրքիայի արած հայտարարությունից, Բաքվի պայմանագրի ստորագրումից 1 օր հետո արտգործնախարարությունը նաեւ հայտնեց, որ Անկարան հավանաբար մի առանձին պայմանագիր կստորագրի Ադրբեջանի հետ, արդյունահանելու Շահդենիզի պահեստի նավթը, որը նշված չէ ստորագրված կոնտրակտում: Երեւի այդ պահեստում կա ավելի քան 2 մլրդ. նավթ: Թուրքիայի կողմից Ադրբեջանում անկախաբար նավթ արդյունահանելու մի այդպիսի քայլ կարող է կարծրացնել Ռուսաստանի դիրքորոշումը: ԱՄՆ էներգիայի նախարարության եւ այլ գրասենյակների պաշտոնյաները հայտնեցին, որ փոխնախագահ Ալբերտ Գորը Կասպից ծովի նավթը արդյունահանելու խնդիրը արծարծել է Չեռնոմիրդինի հետ Վաշինգտոնում հունիս ամսին ունեցած հանդիպման ժամանակ: Այդ պաշտոնյաները նաեւ հայտնեցին, որ շատ հավանական է, որ Ադրբեջանի նավթի խնդիրը կքննարկվի նաեւ Քլինթոնի եւ Ելցինի հանդիպման ժամանակ:

ԼՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ